ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Այսօրվա թերթն ամենառողբերգականն է:

Այսօրվա թերթում տպագրված է այնպիսի մեկի մահագույժը, որի հետ ամենից քիչ կարող ես հաշտվել և առավել ևս՝ հավատալ:

Վախճանվեց Հրաչյա Ներսիսյանը...

Վախճանվեց... ի՞նչ սոսկալի ու սարսափելի է այս գիտակցությունը, այս անողոք օրինաչափությունը, որից դեռ ոչ ոք, ամենամեծ անմահներն անգամ բացառություն չեն կազմել:

Չեմ ուզում հավատալ, որ այլևս երբեք չեմ տեսնելու նրան, սարսափելի է պատկերացնել, որ մեր բեմից ընդմիշտ գնաց Պրոտասովը, Պաղտասար աղբարը, Օթելլոն, Անհայտը (Լերմոնտովի «Դիմակահանդես»), Լիր արքան, Արթին պապը, Մեք Գրեգորը...

Ինչ որ սիմվոլիկ ու միստիֆիկացված էր Հրաչյա Ներսիսյանի մահը: Նրա վերջին, ամենավերջին դերակատարումը եղավ Մեք Գրեգորը: Մեք Գրեգորը մեռնում է՝ մահվանը մարտահրավեր նետած, համառորեն չհաշտվելով այդ գաղափարի հետ ու կատաղի մոլեգնությամբ չընդունելով այն:

Հենց այդպես էլ եղավ Ներսիսյանի մահը:

Մահվանից քիչ առաջ նրանց տանն էի: Լեզուն շաղվում էր, կապույտ ու հրաբորբոք աչքերը մի տեսակ տենդագին փայլ ունեին, դեմքը գունատ էր, տանջահար ու հոգնած: Եվ այնուամենայնիվ կատակում էր, հիշում էր զանազան սրամիտ դեպքեր իր անցյալից, գերագույն ճիգերով աշխատում էր առաջվա Ներսիսյանը երևալ: Մեռնում էր մարդը, մեռնում էր աչքի առաջ, բայց չէր հաշտվում մահվան հետ, մարտնչում էր, մաքառում՝ հուսահատ ու կատաղի: «Ես չեմ մեռնի, Ղևոնդ, չհավատաս, այ ասում եմ, ես չեմ մեռնի», – վերջին րոպեին հանկարծ պոռթկաց նա, և կարծես այսօր էլ ականջիս է նրա մոլեգին-կատաղի ձայնը: Չգիտեմ ինչու, անընդհատ հիշում էի Մեք Գրեգորին, հիշում էի և արտասվում հոգուս մեջ...

Նորից ու նորից եմ նայում արդեն թանկագին հիշատակ դարձած այս նկարներին, մտաբերում եմ շատ իրողություններ, որոնց մի մասը շարադրելու եմ ստորև, և չեմ կարողանում, ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ էլ երբեք չեմ տեսնելու Հրաչյա Ներսիսյանին, այդ մշտապես անհանգիստ, եռանդուն ու կենսասեր մարդուն, և էլ երբեք չեմ լսելու նրա ուրախ-կրքոտ ողջույնը. «Բարև, Ղևոնդ»:

Երբվանի՞ց եմ ճանաչում նրան, – չեմ հիշում: Ինձ անընդհատ թվում է, որ միշտ էլ ծանոթ եմ եղել նրա հետ, միշտ էլ հանդիպել ենք, զրուցել, տեսնվել: Հրաչյա Ներսիսյանը այն անհատականություններից էր, որ ասես մշտապես եղել է քո կյանքի ուղեկիցը, կազմել է կյանքիդ խիստ անհրաժեշտ ու բաղկացուցիչ մասերից մեկը, առանց որի քեզ դժվար ես պատկերացնում: Ավելի մտերմաբար և հիմնավորապես ծանոթացել եմ 1957 թվականից, երբ աշխատում էի Կինոստուդիայում, իսկ Ներսիսյանն էլ նկարահանվում էր «Պատվի համար», ապա՝ «Ամպրոպի արահետներով» ֆիլմերում:

Մեծ դերասան էր, հասկացողության ամենալայն իմաստով, ազատ տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների, բայց հանգիստ ու սիրով ունկնդրում էր լեզվա-ոճական բնույթի այն բոլոր դիտողությունները, որ անում էի ես Էլիզբարովի, ապա՝ խելագար Սեմի կապակցությամբ: Պատահում էր, որ վիճում էինք, որովհետև յուրաքանչյուրս իրենն էր պնդում: Գուցե պետք էր տեղի տալ. հիմա, երբ մտածում եմ, զգում եմ, որ ես պետք է զիջեի: Բայց այն ժամանակ ես երիտասարդ էի, այս հասկացության քիչ աքլորային իմաստով և համառորեն վիճում էի: Իր ասածն ապացուցելու համար բերում էր բազմաթիվ հարցեր ու օրինակներ, հիշատակում էր ֆրանսիացի, անգլիացի, ռուս, հայ շատ հեղինակների, հաճախ բառացի ճշգրտությամբ մեջբերում էր որևէ ստեղծագործության այս կամ այն ցիտատը, իսկ եթե խոսքը վերաբերում էր Շեքսպիրին, անգիր էր ասում ամբողջ պարբերություններ: Հիշատակում էր այդ ամենը և վերջում անպայման ավելացնում. «Հը, հիմա ո՞նց ես»: Եվ ինձ մնում էր միայն տեղի տալ նրա հիշողության ու հսկայածավալ գիտելիքների առջև:

Արդեն պատկերացնում եմ, թե ինչքան կզարմանան Հրաչյա Ներսիսյանին քիչ թե շատ ճանաչող ընթերցողները այս վերջին տողերը կարդալիս: Բանն այն է, որ կա

և նույնիսկ տիրապետում է այն սխալ կարծիքը, որ Հրաչյա Ներսիսյանը գիր-գրականությունից հեռու կանգնած մարդ էր, որ նա չէր կարդում, կամ լավագույն դեպքում քիչ էր կարդում:

Այդպես կարող են մտածել միայն Ներսիսյանին քիչ ճանաչողները: Այս սխալը, ի դեպ, պատահական չէ և գալիս է այդ մեծ մարդուն խորապես չհասկանալուց: Իրոք, մի զարմանալի բնավորությամբ նա ոչ միայն չէր սիրում ու չէր ցանկանում իր գիտելիքները ցուցադրել, այլև ամեն կերպ աշխատում էր իմացածը թաքցնել, ծածկել ներկաներից, աշխատում էր թերուս երևալ: Զարմանքով ու հետաքրքրությամբ լի հայացքով, ժամերով կնստեր ու կլսեր որևէ հարցի շուրջ խոսող մեկին այն դեպքում, երբ տվյալ եղելությունն ինքը նրանից լավ գիտեր: Եվ այսպես ամենուրեք ու ամեն հարցում: Ինչո՞ւ էր այդպես, չեմ կարող ասել, բայց այդպես էր: Սակայն բավական էր ինչ-որ առիթ, ինչ-որ միջադեպ հարկադրեր Ներսիսյանին «բացվել», և հանկարծ ասես մոգական գավազանի մի հարվածով, աչքիդ առաջ հառնում էր գիտելիքների այնպիսի մեծ պաշար ունեցող մի մարդ, որի նմանը ես գրեթե չեմ հանդիպել մեր դերասանների մեջ: